ՎՐԱՑ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՄՈՏ

(«Շուշանիկի վկայաբանության» 1500-ամյակի առթիվ)

Գ. Գ. ՓԱՐՈՒԼԱՎԱ (Թբիլիսի)

Այն գիրքը, որ արտահայտում է վրաց գրականության սկիզբը և տալիս ազգային իրականության հնագույն գեղարվեստական պատկերը, գրվել է 1500 տարի առաջ։ Վարքագրական այդ երկը այն մասին է, ինչը հետագայում Վրաստանի համար ճակատագրական էր դառնալու՝ արևմտյան, թե՞ արևելյան կողմնորոշում, քրիստոնեությո՞ւն, թե զրադաշտականություն։ Երկու համաշխարհային կրոնների բախումը այստեղ երկու պետական-քաղաքական կողմնորոշման կերպարանք է ընդունում և դառնում երկու ուժեղ բնավորության ողբերգություն։ Վկայաբանության հեղինակը Հակոբ երեցն է, գործողության ժամանակը՝ V դարի 70—80-ական թթ., վայրը՝ Ստորին Քարթլին, մասնավորապես Ցուրտավ ավանը։

V դարի երկրորդ կեսին Իրանն առավել մեծ թափով էր ձգտում Հայաստանի և Իբերիայի ձուլմանը։ Իրանական արքաները դրան հասնելու լավագույն միջոց էին համարում քրիստոնեության վերացումը և զրադաշտականության տարածումն այդ երկրներում։ Այսպիսին էր կացությունը, երբ Իբերիայի գահին նստած Վախթանգ Գորգասալը բռնեց երկրի կենտրոնացման, Իրանից անկախություն նվաճելու, տնտեսական և մշակութային վերելքի ուղին։ Այս «ինքնակալ արքան» առավել վճռական պետք է գործեր, քանի որ «Քարթլիում՝ ռամիկ ժողովրդի շրջանում, տարածվեց կրակապաշտությունը»,— գրում է պատմիչը։ Եվ ոչ միայն «ռամիկ ժողովրդի շրջանում»։

467 թ. Ստորին Քարթլիի կառավարիչ Վազգեն բդեշխը «ներկայացավ պարսից արքային,— գրում է Հակոբ երեցը,— բայց ոչ թե պատիվ ստանալու համար, այլ ճշմարիտ աստծո ուրացմամբ ինքն իր անձն իբրև ընծա զոհաբերելու։ Երկրպագում էր կրակին, քանզի ըստ ամենայնի արտաքսել էր իր անձը Քրիստոսից։ Այլև այս ողորմելին պարսից արքային հաճելի լինելու համար կին էր խնդրում նրանից և այսպես էր ասում. «Ով որ իսկական իմ կինն է և որդիները՝ նույնպես քո հավատին կդարձնեմ, ինչպես ահա ես եմ»։

Երբ ամուսնու ուրացության լուրը հասնում է Վազգենի կնոջը՝ հայոց զորավար Վարդան Մամիկոնյանի դուստր Շուշանիկին, նա թողնում է ամուսնական մահիճն ու ընտանիքը։ Վազգենը իրեն անարգված է զգում, փորձում է սպառնալիքով ու ծեծով կոտրել կնոջ դիմադրությունը, սակայն՝ իզուր։ Բդեշխի կողմից բանտ նետված Շուշանիկը տառապում է վեց տարի և այստեղ էլ վախճանվում 475 թ. հոկտեմբերի 17-ին՝ հավատարիմ իր երկրային հավատամքին։ VI դարի վերջին Կիրիոն կաթողիկոսը նրա աճյունը տեղափոխում է Թբիլիսիի Մետեխի տաճար։

476—483 թթ. միջև գրված այս ստեղծագործության հեղինակ Հակոբը՝ ավանդվող իրադարձություններին ներկա և գործուն մասնակից, բդեշխի դրան

երեցն է։ Նա առաջին դեմքով է պատմում և ինքն էլ երևում է Վկայաբանության բազմաթիվ դրվագներում։ Հակոբ երեցը ազդեցիկ դեմք է եղել բդեշխի պալատում և իբրև խոստովանահայր երկար տարիներ կրել Շուշանիկի աջակցի և մխիթարիչի լուծը։

Հակոբը արվեստագետի ներքին հայացքով է դիտում իրադարձությունների զարգացումը։ Դեռ մինչև Վազգենի վերադարձը Յուրտավ, նա այսպես է դիմում իր խցում առանձնացած Շուշանիկին. «Մեծ մարտ է քեզ սպասում, թագուհի» ու խնդրում է նրան պատմել իր կյանքը, «որպեսզի իմանամ և գրի առնեմ քո չարչարանքը»։ Այսպիսով, այն փաստերը, որոնք հետո ներմուծվել են ստեղծագործության մեջ, գրողի կանխատեսությամբ նախօրոք են գրառվել։ Հենց այս պարագան էլ հարկադրում է մտածել, թե Հակոբը գրական գործունեության մեջ փորձված էր, երբ ձեռնամուխ եղավ վկայաբանության շարադրանքին։ Նման ենթադրության համար այլ փաստեր ևս կան։ Այսպես, երկը բավական արտասովոր է սկսվում. «Եվ արդ՝ հաստատապես կպատմեմ ձեզ սուրբ և երանելի Շուշանիկի վախճանը»։ Հենց այստեղ էլ կարդում ենք՝ Շուշանիկը «աստվածավախ էր մանկուց, ինչպես ասացինք», սակայն ստեղծագործության մեջ ոչինչ չի ասվում նրա մանկության ու աստվածավախության մասին։ Կարելի է կարծել, որ այսօր մենք ձեռքի տակ չունենք այն ամենը, ինչ ստեղծվել է այս երախայրիքի հեղինակի կողմից։

«Շուշանիկի վկայաբանության» բնագիրը պահպանվել է X դարի այսպես կոչված «Պարխալյան ճառընտրում»։ Բացի այս ընդարձակ խմբագրությունից, վրացերեն լեզվով գոյություն ունի «Շուշանիկի վկայաբանության» համառոտ խմբագրություն ևս, որը մեզ է հասել XI դարի գրչագրում և թարգմանված է հայերենից։ Ընդարձակ և համառոտ խմբագրությամբ է պահպանվել «Շուշանիկի վկայաբանությունը» նաև հայերեն լեզվով։ Այդ երկուսի ընդհանուր աղբյուրը Հակոբ երեցի երկասիրած ընդարձակ խմբագրությունն է[1]։

Երկում զարգացված կոնֆլիկտի հիմքը, ինչպես ասվեց, հավատուրացությունն է, իսկ ստեղծագործությունը պատկանում է քրիստոնեական գրականության վարքագրության ժանրին։

Քրիստոնեությունը, հեթանոսության հետ համեմատած, ավելի առաջադիմական կրոն էր։ Այն վերածվեց ազգային ինքնագիտակցության որոշակի ձևի։ Հավատարմությունը հավատին, սովորաբար, համազոր էր ժողովրդի հավատարմությանը, ուստի թշնամին միշտ ջանում էր արմատախիլ անել մեկը, որպեսզի վերջ դնի և մյուսին։ Այդպես էր նաև այն ժամանակ, որի մասին պատմում է հնագույն վրացական երկը։ Վազգենը հավատուրացությամբ դավաճանում էր ազգային գործին, իսկ Շուշանիկը քրիստոնեության պաշտպանությամբ թիկունք էր կանգնում երկրի շահերին։ Բդեշխը ստեղծագործության մեջ միայնակ է ներկայանում, մինչդեռ նրա կինը գաղտնի թե ակնհայտ վայելում է ամենքի համակրանքը։ Իր գործողությունների վսեմ առաքելությունը հստակորեն է գիտակցում ինքը՝ Շուշանիկը, և դա ներքին

[1] ივ. ჯავახიშვილი, თხზულებანი, ტ: VIII. თბ., 1977, էջ 56—65, հմմտ. კ. კეკელიძე, ქართული ლიტერატურის ისტორია, ტ. I. თბ., 1960, էջ 113—122, հմմտ. նաև՝ იაკობ ცურტაველი, მარტვილთბაჲ შუშანიკისი, გამოსცა ილია აბულაძემ, ტფ. 1938, էջ 019—045.

մեծ ուժ ու համոզվածություն է հաղորդում նրա յուրաքանչյուր խոսքին ու շարժմանը։ «Քո հայրը,— դիմում է նա բդեշխին,— վկայարաններ կանգնեցրեց և եկեղեցիներ շինեց, իսկ դու քո հոր գործերը ապականեցիր և այլակերպեցիր նրա բարի արարքները։ Քո հայրը սրբերին հյուրընկալեց իր տանը, իսկ դու դևերին հյուրընկալեցիր, նա երկնի և երկրի աստծուն խոստովանեց և հավատաց, իսկ դու ճշմարիտ աստծուն ուրացար և կրակին երկրպագեցիր։ Եվ ինչպես որ դու ուրացար քո արարչին, այնպես էլ ես քեզ արհամարհեցի։ Եթե անգամ բազում տանջանքներ պատճառես ինձ, ես մասնակից չեմ դառնա քո գործերին»[2]։ Ուրացողի համեմատությունը հոր հետ ավելի ցայտուն է դարձնում նրա անկումը։

Երկի խորագնին հետազոտությունը ցույց է տալիս, թե որքան բազմերանգ է այն։ Ազգային և դավանական շահագրգռվածություններն այստեղ զորեղ անհատական մարդկային ազդակներով են շարժման մեջ դրվում։ Այդ ազդակների հոսքը առավել քան խորունկ է, ուստի և՝ մեծապես հետաքրքրական։ Բդեշխը ցանկանում է կնոջ հետ խոսել եղբոր և հարսի ներկայությամբ՝ հացկերույթի ժամանակ, սակայն անհաջող փորձից հետո նա կորցնում է հավասարակշռությունը և դաժանորեն ծեծում կնոջը. «...Տուն ավերող էր անվանում նրան»։

Պարսիկների առաջ չափազանց ծանր պարտավորություն է վերցրել Վազգենը։ Ուրացությունից հետո հենց սկզբից նա կանգնեց անել վիճակի առաջ, երբ չհամաձայնվեց հավատափոխվել իր իսկ կինը։ Պատահեց առավել վատթարը. կինը լքեց ամուսնական մահիճը՝ չսպասելով ամուսնու ժամանումին ու բացատրությանը։ Քրիստոնեական էթիկայի համաձայն նա այդպես չպետք է վարվեր, քանի որ «Եւ կին, որ ունիցի այր անհաւատ՝ և նմա կամ իցէ բնակել ընդ նմա, մի՛ թողցէ զայրն, զի սուրբ է այրն անհաւատ կնաւն. և սուրբ է կինն անհաւատ արամբն» (Ա Կորնթ. է, 13—14)։ Գրողը հայտնում է, որ Վազգենի արարքը «ուրախացրեց [Իրանի] արքային, և նա հրամայեց կնության տալ արքայադստերը», այսինքն՝ Վազգենը Տիզբոնում նորից է ամուսնանում։ Եթե նկատի առնենք կանացի խոցված ինքնասիրությունը, ապա հասկանալի են դառնում ստեղծագործության որոշ հատվածներ, ուր թվում է, թե Շուշանիկը կոպտորեն կամ անտրամաբանորեն է գործում (օրինակ՝ երբ անմեղ հարսի «երեսին շպրտեց բաժակը»)։ Հաճախ տիկնոջ խոսքերի և վարմունքի մեջ կարելի է տեսնել չարացածության և վրիժառության երանգ։ Ակներև է, որ գործ ունենք վիրավորված սիրո զգացման հետ։

Վազգենը որոշակիորեն դաժան, աներեր բդեշխի դեր է տանում, որին անհնար է շեղել իր ընտրած ճանապարհից։ Սակայն ձախողվում է շահի հետ նրա համաձայնությունը, հետևաբար նաև՝ աչքի ընկնելու, բարձրանալու ծրագիրը։ Նա կորցնում է հասարակության համակրանքն ու աջակցությունը, փուլ է գալիս ընտանիքը։ Այս ամենին բդեշխը, իհարկե, չէր սպասում։ Եվ նա հուսահատ պայքարի մեջ է մտնում, որպեսզի կանխի գրեթե ճակատագրական անխուսափելիությամբ սպառնացող աղետը։ Բդեշխը փորձում է ամենախիստ միջոցներով ահաբեկել Շուշանիկին, որպեսզի կոտրի նրա կամքը։ Նրա փորձը չի հաջողվում և խոցված ինքնասիրությամբ, խեղդելով սեփական սրտի ներքին ձայնը, ձիռնամուխ է լինում ուրիշ քայլերի։

---

[2] ՈՅԿԾ ՑՈՒՐՏԱՎԵԼՈ, նշվ. հրատ., էջ 13—14։

Վազգենը բռնությամբ պալատ է բերել տալիս կնոջը։ «Եվ հրամայեց կապել նրան և ծեծել։ Կատաղել էր և ասում էր. «Ահա չօգնեցին քեզ քո եկեղեցին և քո պաշտպան քրիստոնյաներն ու նրանց տերը»։ Եվ երբ երեք հարյուր հարված հասցրեցին մահակով, ոչ ախուվախ, ոչ հառաչանք դուրս չեկավ նրա բերանից»։ Հատվածը բավականին խոսուն է. Վազգենը սպասում է, որ գոնե հիմա կընկճի կնոջը։ Սակայն նահատակվող Շուշանիկը հառաչանք անգամ չի արձակում, ընդհակառակը՝ կարծես գերմարդկային զորություն ստանալով հանդիմանում է ամուսնուն. «Դժբախտ, դու ինքդ քեզ չխնայեցիր և հեռացար աստծուց, ե՞ս պետք է քեզ խնայեմ»։ Այս արդեն մարտիկի վարմունք է։ Շղթայված և գանահարությունից ուժահատ Շուշանիկը փորձում է իր մարտնչող հոգու ինչ-որ «հետքը» թողնել հակառակորդի վրա։ Վազգենը բերդ է տանում կնոջը, հյուսիսային կողմում նա գտնում է մի «փոքրիկ մութ» խուց և այնտեղ նետում։ «Եվ շղթան, որ պարանոցին էր դրված, այդպես էլ մնաց, և կնքեց այն անօրեն Վազգենը իր կնիքով։ Իսկ սուրբ Շուշանիկն ասաց. «Ես ուրախ եմ սրա համար, որպեսզի այստեղ տանջվեմ և այնտեղ հանգստանամ»։ Իսկ բդեշխը ասաց նրան. «Այո, այո, հանգստացիր»։ Շուշանիկն այստեղ ևս մնում է աներեր, հնարավորություն չտալով, որ Վազդենն իրեն հաղթանակած զգա։

Այս դրվագում կա մի գողտրիկ մանրամասն, որը կոնկրետ հոգեկան վիճակ, բնավորության ընդհանուր բնույթ և իրադրություն արտահայտելու առումով զարմանալիորեն խոսուն է։ Դա բդեշխի պատասխանն է. «Այո, այո, հանգստացիր»։

Վերևում նկարագրված իրագարձություններից քիչ անց, այսպիսի անսպասելի տեսարանի ենք հանդիպում. «Բդեշխը միջնորդներ առաքեց և ասաց. «Կատարիր իմ կամքը և եկ պալատ. այլապես, եթե տուն չգաս, Ջոր (Ճոր) կուղարկեմ քեզ, կամ էլ էշի վրա նստեցրած՝ արքունիք»։ Իսկ սուրբ Շուշանիկն այսպես ասաց. «Թշվառական ու անմիտ, եթե դու ինձ արքունիք կամ Ջոր (Ճոր) ուղարկես, ով գիտե, թերևս այնտեղ հանդիպեմ որևէ լավի և փրկվեմ այս չարից»։ Բդեշխը խորհում էր այն խոսքերի վերաբերյալ, որ նրան ասաց [Շուշանիկը]. «Ով գիտե, թերևս այնտեղ հանդիպեմ լավի», որ «Չլինի թե այնտեղի իշխաններից մեկի կինը դառնա»։ Եվ այնուհետև՝ ոչ մեկին չուղարկեց նրա մոտ»[3]։

Այսպիսով, բդեշխը դարձյալ հաշտություն է խնդրում Շուշանիկից, իսկ կինը պատասխանում է ամուսնուն բազմանշանակ ակնարկով, որը ինչքան բնական է ընտանեկան դրամային նվիրված նորօրյա երկերի համար, նույնքան էլ խորթ է նահատակի մտածողությանն ու ըմբռնմանը։ Հոգեբանական այդ քայլը սյուժեի զարգացման օղակներ է ստեղծում։ Նրան կրկին ենք հանդիպում, երբ Վազգենը ցանկանում է ամուսնական կասկածամտություն արթնացնելու ճանապարհով հասնել իր նպատակին։ Նա հանձնարարում է Հակոբին. «Իմ զարդերը նրան չեմ թողնի, եթե նա իմ կինը չէ. կգտնվի մեկը, որպեսզի մաշի դրանք»։ Իսկ երբ երեցը նրան է տանում զարդերը, Վազգենը «դարձյալ ասաց. «Այսուհետև էլ կգտնվի մեկը, որ զարդարվի սրանցով»։

Իշխանատենչ, փառասեր ու ուժեղ անհատի այս կրքոտ պայքարը գնա-

3 Նույն տեղում, էջ 36։

լով որոշակիորեն վերացական բնույթ է ընդունում, անցնում անհատական եսասիրության ոլորտը։

Այն, որ Շուշանիկի կերպարում ակներևորեն հանդես են գալիս երկրային-անհատական կրքերը, նրան տանջում են ներքին հակասությունները, երկրայինից վեր բարձրանալու, երկվությունը հաղթահարելու ուղիով նա մերձենում է իր իդեալին, լիովին համապատասխանում է քրիստոնեական աշխարհայեցությանը։ Քրիստոնեությունը համակիր է և բննում է այն տառապող երկվությունը, որը հանդես է գալիս անձնավորության խորքում (Հռովմ. է. 15—20, 23, Մատթ. Իէ, 46)։

Հեթանոսական աշխարհի աստվածները պայքարում օգնում են իրենց երկրպագողներին, սակայն, ինչպես նշում են, այդ աստվածները իրենց համար չէ, որ պատերազմում են, իրենց գործի համար չէ, որ «կանչում» և «կոչում» են մարդկանց։ Ռոլորովին այլ է նորկտակարանային գաղափարի ակունքը. «Ոչ է մեզ պատերազմ ընդ մարմնոյ և ընդ արեան. այլ ընդ իշխանութիւնս և ընդ պետութիւնս, և ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ՝ ընդ այսս չարութեան, որ է ի ներքոյ երկնից» (Եփես. Զ, 12)։ Տառապանքի ու չարչարանքի աստվածաշնչական կոնցեպցիան այսպիսի ընդարձակ և հասարակայնորեն ուշադրավ բովանդակություն է պարունակում վարքագրական գրականության հերոսների պայքարի մեջ։ Այս ելակետից էլ պասը մեկնվում է իբրև «մարտական վերահսկողություն», իսկ ասկետիզմը՝ «մարտական կարգապահություն»։ Շուշանիկի պայքարը պետք է ըմբռնել իբրև պատերազմ «ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ՝ ընդ այսս չարութեան, որ է ի ներքոյ երկնից»։ Մինչ Շուշանիկի՝ իր անհատական մղումների դեմ ընդվզելը պետք է ընկալել այնպես, ինչպես այդ ըմբռնում էին ժամանակակիցները, այն է՝ մարմնական ցանկությունը արժեքազրկում է ամենաբարձր, հասարակայնորեն կարևորագույն արժեքները, ուստի պետք է այն արմատախիլ անել։ «Ուր գանձք ձեր են, անդ և սիրտք ձեր լիցին» (Մատթ. Զ, 21)։ Շուշանիկի անընկճելիությունը, այն զարմանահրաշ զորությունը, որի շնորհիվ այդ կինը հաղթահարում է սեփական տառապանքը, պետք է ընկալենք իբրև սրբազան նշան, «վկայություն» այն հավատարմության, որով անձնավորությունը պատասխանում է աստծո հավատարմությանը։ «Շուշանիկի վկայաբանությունը» հենց այդ իմաստով է կոչվում «վկայաբանություն», ինչպես որ «Սուրբ Գևորգի վկայաբանությունն» է բյուզանդական գրականության մեջ, կամ Ոսկյաններին ու Վահան Գողթնացունը՝ հայկականում։ Շուշանիկը մարտիրոս է, իսկ հունարեն μάρτυς բառի նախնական նշանակությունն է «վկա», «վկայող», «свидетель»։ «Վկայաբանություն» բառը այս իմաստով է գործածվում աստվածաշնչական տեքստերում, վաղքրիստոնեական հեղինակների մոտ, հին հայերին ու վրացերեն երկերում։ «Տանջանք»-ի նշանակություն այս բառը հետագայում է ձեռք բերում[1]։

Մենք հատուկ անդրադարձանք այդ բառիմաստին, քանի որ վերնագրի նշանակության պարզաբանումով դյուրանում է ստեղծագործական հետազո-

[1] Տե՛ս ი. აბულაძე ძველი ქართ. ენის ლექსიკონი, თბ., 1973, հմմտ. ՆՀԲ, II (Վկա—որ ի վէճ կամ ի վէջ ի վերայ գայ ի պէտս ստուգութեան իրացն), հմմտ. նաև՝ N. Brox, Zeuge und Martyres. Untersuchungen zur frühchristlichen Zeugnis—Terminologie, München, 1961.

տությունը։ Հնագույն վրացական այս երկը վեպ է հավատարմության մասին։ Նրա հերոսի ողբերգական կյանքը վկայություն-հաստատում է վսեմ իդեալների նկատմամբ անձնական հավատարմության։

Հակոբ երեցի երկում զարգացված կոնֆլիկտը ընդհանուր ուրվագծով ևս ներքնապես կապվում է ավետարանական կոլիզիայի հետ։ Քանի որ գրքում գերիշխողը հավատարմության պաթոսն է, ապա նույնքան կարևոր տեսանկյունից այն պատմություն է անհավատարմության մասին։ Ճշմարտությանն ու Շուշանիկին դավաճանողը նրա իսկ ամուսինն է, ընդ որում՝ դավաճանը ոչ միայն «համահոգի», այլ նաև «համամարմին» է նրա հետ, ում դավաճանում է[5]։

Պլաստիկ գեղեցկության և վսեմ ժեստի անտիկ իդեալը այս կամ այն չափով մշտապես ուղեկցում էր վրաց աշխարհզգացողությանը, նրա հետքը առկա է և Հակոբի ստեղծագործության մեջ։ Երբ թագուհին հեռանում է պալատից և առանձնանում խցում, այցի եկած երեցը թաքուն վախով է դիմում նրան. «Մեծ մարտ ես մղելու, թագուհի»։ Դրամատիկ, սակայն պաթետիկ հնչերանգով է հնչում տիկնոջ պատասխանը. «Երե՛ց, ես էլ պատրաստ եմ մեծ մարտի համար»։ Առաջին բառին հետևող դադարը այստեղ սովորականից երկար է, լարված և միաժամանակ խոսուն։ Այնուհետև հնչերանգը միանգամից բարձրանում է, և մեզ է ներկայանում ճակատագրի դաժան հարվածը ցուցադրաբար կրելու պատրաստ մարտիրոսուհին։ Ներքին պաթոսով և ձևի արտիստական մշակումով այս նույնպիսի ժեստ է, ինչպես, ասենք, Կոռնելի հայտնի ողբերգությունում, երբ դիմում են Մեդեային. «Ժողովրդին դու ատելի ես, քո ամուսինը քեզանից խույս է տալիս նման ձախորդության պահին, ի՞նչ է քեզ հավատարիմ մնում»—«Ես՝ ինքս»։

Հերոսության արիստոկրատական բարոյականության, հելլենական «հոգու մեծության» կնիք են կրում Շուշանիկի որոշ ժեստերը։ Վկայության յոթերորդ տարում «Սուրբ և երանելի Շուշանիկի մարմնի վրա վերքեր առաջացան, ճիճու էլ ընկավ նրա վերքերի մեջ, որը ինքը վերցրեց իր ձեռքով, ցույց տվեց ինձ և ասաց. «Երեց, թող քեզ ծանր չթվա այս, քանզի այս ճիճուն մեծագույն է և չի մեռնում»։ Մեկ այլ դրվագ. Հակոբը խնդրում է խոշտանգված տիկնոջը. «Հրամայիր, որ լվանամ քո դեմքը, դեղ ու սպեղանի դնեմ, որպեսզի գոնե գիշերվա ընթացքում բուժվի»։ Սակայն սուրբ Շուշանիկն ասաց ինձ. «Երեց, մի ասա այդ, քանզի արյունը իմ մեղքերի մաքրիչն է»։ Ներքին ազատության արիստոկրատական ժեստով է պատասխանում մարտիրոսուհին։ Մյուս դեպքում աստվածային գործի համար մարտնչած «սուրբ ասպետուհին» մերժում է դեմքի արյունը լվանալու առաջարկը, ցանկանում է կրել հոգևոր արիության և սրբության այդ ստույգ նշանը։ Ներքին ազատության և «հոգու մեծության» այսպիսի որոշակի արտիստական ցուցադրությունը տիպիկ է անտիկ աշխարհի համար։

---

5 Յուրայինից չընդունվելու, յուրայինի դավաճանության այս հուզումնալից մոտիվը VI դարում մշակել է մեծահամբավ բյուզանդական բանաստեղծ Ռոմանոս Մելոդոսը («Հուդայի դավաճանության մասին»)։ Այս թեմային անդրադարձած իտալական վերածնության վարպետներից ամենաազդուն Ջոտտոն է («Հուդայի համբույրը»)։ Եղբայրների կողմից եղբորը՝ Հովսեփ Գեղեցիկին, վաճառելու աստվածաշնչական մոտիվն է արծարծել Թոմաս Մանը («Հովսեփը և նրա եղբայրները»)։ Հակոբ երեցը դեռևս V դարում է իորհել այս հավերժական պրոբլեմի շուրջը, միայն թե իր մտահղացումը հիմնել է ազգային-պատմական նյութի վրա։

Վկայակոչված դրվագը այսպիսի ուշագրավ նրբագծով է ավարտում գրողը. «Ես պատասխանեցի և ասացի. «Քուրձը քիչ ես համարել և արդ այդ ճիճուների համար ես ուրախ»։ Եվ նա ասաց ինձ պաղատանքով. «Իմ կենդանության ժամանակ ոչ մեկին մի ասա քուրձի մասին, քանզի շուտով թողնելու եմ այս իմ ողորմելի մարմինը»։ Քանզի ներսից քուրձ էր հագել և ինձնից բացի ոչ մեկը չգիտեր, իսկ վրայից, մարդկանց աչքի առաջ, Անտիոքի պարեգոտ էր կրում»։ Տիկինը անտիոքյան թանկարժեք պարեգոտով է դուրս գալիս «մարդկանց աչքի առաջ», այդ հանդիսավոր զգեստն է ծածկում ասկետի քուրձը։ Այստեղ հերոսի կերպարը կարծես ձայնակարգման սկզբունքով է կերտված. մեծագին զգեստով զարդարված տիկինը և քրձազգեստ, անարգված մարտիրոսուհին ամբողջություն են՝ անցյալն ու ներկան, երազն ու իրականությունը համատեղ են հանդես գալիս։ Բարդ, դրամատիկ է այդ ամբողջությունը։

Թեև 1500 տարի առաջ ստեղծված երկը կրում է անտիկ աշխարհզգացության և գեղագիտության կնիքը, նրա մեջ միս ու արյուն ստացած մարդկային մոդելը, անկասկած, լիովին նոր մարդու իդեալ է։ Նրանում չի ջնջված «թուլության ամեն մի նշան» (Հեգել)։

Շուշանիկը նոր դարաշրջանի գեղարվեստական իդեալի կերպավորում է և քիչ է նմանվում ազգային դիցաբանության գլխավոր հերոս Ամիրանին, որը ամբողջական է, զերծ երկրային արատներից, սակայն որի ներքին աշխարհը փակ է մեզ համար։ Շուշանիկը սկզբից ևեթ չէ, որ հանդես է բերում իր իդեալական էությունն ու կամքը, ինչպես Ամիրանը։ Նա այդ էության հաստատման ներքնապես հակասական ուղի է անցնում՝ պրոցես, որի ականատեսն է և ընթերցողը։ Շուշանիկի աստվածային համարձակության հետնախորքում երկրային ձգտում ու թուլություն է ի հայտ գալիս։ Վազգենի կրակապաշտությանը Շուշանիկը անհնազանդությամբ է պատասխանում, երես դարձնում Նրա մահճից, իսկ երեկոյան «եկեղեցուն մերձ մի տնակ գտավ, այնտեղ գնաց դառնությամբ լի ու հենվելով խորշերից մեկին՝ լացեց դառն արցունքներով»։ Օրինակելի պլաստիկությամբ ուրվագծված ժեստը արտահայտում է, թե միայնակ մնացած հերոսը ինչպես է սգում մոտալուտ դժբախտությունը։

Արդեն տեսանք, թե ինչպիսի մեծ համարձակությամբ է զրուցում Շուշանիկ-թագուհին առաջին անգամ այցի եկած Հակոբի հետ («Երե՛ց, ես էլ պատրաստ եմ մեծ մարտի համար» և այլն)։ Նույն հատվածում բախտից անբավականություն և ներքին տառապանք է հնչում Շուշանիկի խոսքերում. «Միայն իմն են այս վշտերը»,—բողոքում է նա երեցին։ Մեկ այլ դեպքում մարտիրոսուհին մռայլորեն ու չարացած վիճում է պալատ վերադառնալ խնդրողների հետ, իսկ խցում առանձնանալիս՝ աղաղակում ձեռքերը վեր պարզած. «Տե՛ր աստված, ո՛չ հոգևորականներից մեկը գտնվեց գթացող, ո՛չ էլ այդպիսի աշխարհական հայտնվեց այս ժողովրդի մեջ, այլ բոլորը ի մահ հանձնեցին ինձ աստծո թշնամի Վազգենին»։ Բայց երբ Ջոջիկը այցելում է բանտարկված Շուշանիկին, կարծես միանգամից բացվում են տիկնոջ հոգեկան ու մարմնական վերքերը, սպառնալիք ու անեծք, ողբ ու հույս է հոսում նրա շուրթերից. «Կդատեն ինձ ու Վազգեն բդեշխին այնտեղ, որտեղ չկա աշառություն դատավորաց դատավորի և արքայից արքայի առաջ, որտեղ չկա տղամարդու և կնոջ խտրություն, որտեղ նա և ես ուղիղ խոսք կասենք մեր տեր Հիսուս Քրիստոսի առաջ։ Կհատուցի տերը նրան, որ անժամանակ քաղեց իմ պտուղը, մարեց իմ

ճրագը, թառամեցրեց իմ ծաղիկը, խավարեցրեց իմ գեղեցկության հմայքը և ստորացրեց իմ մեծությունը»։

Այն մարգկային վիճակից, երբ այսպես ծանր է ընկալվում երկրային գեղեցկության «խավարեցումը», մեծության «ստորացումը», ողբով է սգում մարմնական գեղեցկության «ծաղկի թառամեցումը» մինչև այս ամենից վերանալը՝ դեպի աստվածային զորություն, իհարկե, հսկայական տարածություն է ընկած։ Շուշանիկը կտրում անցնում է մարդկային թուլություն-աստվածային զորություն այդ տարածությունը ներքին մեծ տառապանքի գնով, սակայն հենց այդ թուլությունից ու տառապանքից ծնված արիությամբ։ Թուլությունն ու նրա հարուցած ցավն ու տառապանքը իմաստավորվում են էթիկական զորեղ տարրով, անձնավորությունը լցվում է հակառակ ուղղությամբ ընդվզելու ներքին զորեղ պաթոսով։ Այդ պատճառով են ասում, որ տառապանքը քրիստոնեական ընկալմամբ աստվածային տարր ունի, այն անխուսափելի անցումային փուլ է մինչ աստվածայնություն բարձրանալիս։ Եվ երբ տիկինը հաջորդ դրվագում աղաղակում է. «...այլ ես, սիրելիներս, ահա գնում եմ հավիտենականության նախանշված ուղիով։ Իմ այս վշտի փոխարեն Քրիստոսը ուրախություն կշնորհի, տառապանքի փոխարեն՝ հանգստություն, գանահարվելու, քարշ տրվելու, անարգվելու փոխարեն՝ կգտնեմ անվախճան մեծություն և պատիվ երկնքում», վկան արդեն հավասարակշռված է և նրա հզոր հոգին արդեն մոտիկից է տեսնում հավերժական արևի իշխանությունը։ Սակայն դա, համենայն դեպս, հերոսի դասականորեն կուռ ու անքակտելի ժեստ չէ։ Դա ցավի հաղթահարումով և մեծ տառապանքի գնով ձեռք բերված ժպիտ է, ժպիտ արցունքների միջից, ինչպես նման դեպքերում ասում էր Հեգելը։ Մարդկային թուլության և համարձակության-վսեմանալու դրվագները հոգեկան ապոթեոզի կատարելության տրամաբանությամբ հաջորդում են մեկը մյուսին։

Մարտական ոգի, չարության դեմ անսասանության պաթոս է սերմանում Շուշանիկը, երբ դեմքին չորացած արյունը կրում է իբրև սրբություն, մերժում է կապանքների արձակումը և «գլուխը չի դնում բարձի վրա, այլ աղյուս է դնում սնարին»։ Պատահական չէ, որ տիկինը քաղաքավարի շնորհակալություն հայտնելով չէ, որ ընդունում է այդ առթիվ ուրիշների անհանգստությունը։ «Եթե այդպես չվարվենք, մենք կկորցնենք մեր էության լավագույն մասը»,— պարզաբանում է մարտիրոսուհին։

Շուշանիկը ապացուցում է ողջ երկրին, որ եթե այդ են պահանջում երկրի շահերը՝ անձնավորությունը կարող է առավել ծանր բեռ ստանձնել, քան կարծում է հենց ինքը։ «Նրա գործը հռչակվեց ողջ Քարթլիում։ Եվ գալիս էին տղամարդիկ և կանայք...», գալիս էին տանելու իրենց հետ մարդկային արժանապատվության, ճակատագրի առաջ չընկրկելու, հավատի ու երկրի հանդեպ հավատարմության սերմերը...

Ընթերցողի երևակայության մեջ Գողգոթայի նման առանձնացած, ամենինչից զատորոշված է ներկայանում այն բանտը, որտեղ վեց տարի տառապում էր Շուշանիկը։ Բանաստեղծական երևակայության ուժով ամբողջ Վրաստանի բնապատկերից ահա թե ինչպես տարբեր, անջրպետված ու միայնակ են հանդես գալիս բանտն ու երկրամասը... «Ամռանը կրակի նման այրող է արևի ջերմությունը, քամին՝ խորշակ, ջուրը՝ վնասակար։ Բնակիչներն իսկ ախտավոր ջրից ուռած ու դեղնած, խոցոտ, թառամած, բոսոտ, ծաղկատար.

ուռած դեմքերով, կարճ ապրող և չկա ոչ մի ծերունի այդ երկրում»։ Այսպիսին է Շուշանիկի Գողգոթան, որի կատարին, ինչպես դրող և ինչպես գիրք, վրաց հնագույն գրքի հերոսուհու՝ Շուշանիկի պատկերն է։

«Շուշանիկի վկայաբանության» մեջ առաջին անգամ ձևավորված դավանանքի և երկրի շահերի օրգանական ձուլման կոնցեպցիայի ճշտությունը ամբողջությամբ հաստատեց Վրաստանի հետագա կյանքի ողջ պատմամշակութային ընթացքը։ Առաջին գրքի հիման վրա վրաց իրականությունը մարտիրոսի կերպարով առաջ քաշեց ազգային հերոսի պրոբլեմը։

Վրաստանի սիրո և հնազանդության լուծը հայուհի Շուշանիկը նույնպիսի ազատությամբ ու հույսով է կրում, ինչպես նույն դարում Վախթանգ Գորգասալի մայրը՝ պարսիկ իշխան Բարզաբոդի դուստր Սազդուխտը, VI դարում՝ պարսիկ Եվստաթիոսը, VIII դարում՝ աշխարհի կեսին տիրած արաբների զարմ Աբոն։ Սրանք վրաց ազգային իդեալների համար ընկած հերոսներ են։

Հակոբ Երեցի դասական գողտրիկ երկի լեզվի և ոճի կնիքն է կրում ողջ վրաց մատենագրությունը։ Ներգործության այսպիսի ուժ վիճակված է խորապես ինքնատիպ, ժողովրդի աշխարհզգացողության ընդերքում խոր արմատներ ձգած գլուխգործոցներին միայն։

У ИСТОКОВ ГРУЗИНСКОЙ КУЛЬТУРЫ

(К 1500-летию «Мученичества Шушаник»)

Г. Г. ПАРУЛАВА (Тбилиси)

(Резюме)

Грузинской книге, которая донесла до нас древнейшую художественную картину действительности, — 1500 лет. Эта книга — агиографический роман Якова Цуртавели «Мученичество Шушаник» (написан в 476—483 гг.). В нем затрагивается «вечная» проблема политической и культурной ориентации Грузии — Запад или Восток, христианство или зороастризм (позднее — магометанство). Столкновение двух мировых религий выливается в трагедию двух сильных характеров — питиашха Картли Варскена и его жены Шушаник, дочери спарапета Армении Вардана Мамиконяна. Отрекшись от христианства, Варскен изменяет национальной самобытности Грузии. А женщина-армянка, принесшая себя в жертву ради христианской веры, олицетворяет идеалы единого грузинского национального государства.

Идейное содержание романа многослойно. К интересам религиозным и патриотическим здесь примешиваются интимно-человеческие импульсы. В поступках и внутренних переживаниях Шушаник явно проскальзывает чувство оскорбленной любви (в Иране Варскен вторично женился). С другой стороны, многое в драматичном, противоречивом образе Варскена становится ясным лишь при учете его стремления к Шушаник. В образе главной героини романа столкновение божественного идеала и человеческих страстей принимает трагический характер. Шушаник идет по пути возвышения над земной действительностью через внутреннюю борьбу и страдание. Весь художественный пафос романа заключается в этом внутреннем, психологическом конфликте.